Գիտություն

ԱՊՐԻԼ
№ 4
(221)
2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2009 թվականի գիտական և գիտակազմակերպական ընդհանուր արդյունքներին էր նվիրված ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Հայ եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, ՀՀ կառավարության անդամներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր, հանրապետության բուհերի ռեկտորներ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ:

Ժողովը մեկնարկեց ապրիլի 21-ին ԳԱԱ գիտական բաժանմունքների տարվա արդյունքների ամփոփումով: Շահագրգիռ քննարկումներին մասնակցեցին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:

Ապրիլի 23-ին ԳԱԱ նիստերի դահլիճում գումարվեց տարեկան ընդհանուր ժողովը: Բացելով այն ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում կյանքից հեռացած ակադեմիկոսներ Արմեն Թախտաջյանի, Ֆադեյ Սարգսյանի, Սիդա Ավետիսյանի և թղթակից անդամ Արամ Քալանթարյանի հիշատակը:

Չայնը տրվում է Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ Կճոյանին: Վերջինս ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնությունը և մաղթանքները՝ ի փառս հայ գիտության զարգացման և ի հաջողություն ժողովի աշխատանքների:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2009 թվականի գիտական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արամ Շահինյանը:

Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն Վիգեն Թոփուզյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Սերգեյ Ադյանը, ԳԱԱ ակադեմիկոս Ռոբերտ Աթոյանը, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանը, ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը, ակադեմիկոս Կոնստանդին Ղարագյոզյանը, ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցիչ Լիլիթ Սահակյանը, ԳԱԱ արտասահմանյան անդամներ Ռուբեն Մելքոնյանը և Սամվել Գրիգորյանը:

Ժողովում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, որը շնորհակալություն հայտնեց ԳԱԱ-ի նախագահությանը՝ կառավարությանը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիմքում ընկած հիմնադրույթներն ուշադրության կենտրոնում պահելու համար:

- Ցանկացած կառավարության գերնպատակն է ստեղծել մրցունակ տնտեսություն: Իսկ մրցունակ տնտեսություն ասելով՝ ժամանակակից աշխարհում հասկանում են գիտելիքի վրա հիմնված տնտեսություն: Ավելին, գիտելիքի վրա հիմնված տնտեսություն հնարավոր չէ ստեղծել, եթե հասարակությունը հիմնված չէ գիտելիքի վրա: Սա է Հայաստանի Հանրապետության հեռանկարային և երկարաժամկետ զարգացման տեսլականը: Մենք այլընտրանք չունենք, քան զարգացնել գիտությունը և դրա վրա հիմնված տնտեսությունը,- ասաց Տիգրան Սարգսյանը:

Ընդմիջումից հետո նոր գերծանր 117-րդ տարրի հայտնագործության մասին զեկուցումով հանդես եկավ այդ հայտնագործության հեղինակներից Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանը:

Երեք ուղի՝ գիտությունը և կրթությունը զարգացնելու մասին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին և Ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներին: Նախագահն ասել է, որ անհրաժեշտ է համարում Ակադեմիայի վերջերս անցկացված տարեկան ընդհանուր ժողովից հետո գիտնականների հետ քննարկել գիտության զարգացմանը խոչընդոտող խնդիրները և դրանց հնարավոր լուծումները: ՀՀ նախագահը խոսել է մեր երկրում գիտությունը և կրթությունը զարգացնելու երեք առանցքային ուղիների մասին. «Առաջին ճանապարհը, որով մենք պետք է շարժվենք՝ առկա ուսումնական և գիտական հաստատությունների վերակազմավորումն ու ավելի արդյունավետ օգտագործումն է, այսինքն՝ բարեփոխումների շարունակականության ապահովումը: Երկրորդ ճանապարհը նոր տիպի ուսումնական և գիտական հաստատությունների ստեղծումն է, ինչպիսին, օրինակ, հիմնադրեցինք Տավուշում՝ ժամանակակից ինտերնատ-դպրոց, որտեղ ուսուցումը լինելու է օտար լեզվով և կիրառվելու են ուսման ընագավառում ամենաժամանակակից ձեռքբերումները: Երրորդ ճանապարհը մեր ուսանողներին և երիտասարդ գիտնականներին աշխարհի լավագույն ուսումնական ու գիտական հաստատություններում կրթվելու փորձ ձեռք բերելու հնարավորություն ընձեռելն է»:

Ակադեմիկոսները երկրի ղեկավարի հետ զրուցել են գիտության զարգացումը խոչընդոտող մի շարք խնդիրների մասին: Դրանցից առաջնահերթ է համարվել այն, որ Ակադեմիան, համապատասխան փորձա-կոնստրուկտորական ենթակառուցվածքների բացակայության պատճառով, չի կարողանում իր գիտական արդյունքները լիարժեք ներդնել տնտեսությունում: Խոսվել է նաև ԳԱԱ ճյուղային ինստիտուտների և տնտեսության համապատասխան ճյուղերի միջև համագործակցության գործուն մեխանիզմներ ստեղծելու ուղիների մասին: Զրուցակիցներն անդրադարձել են հասարակագիտական գիտությունների, մասնավորապես՝ հայագիտության զարգացումը խթանող պայմանների ստեղծման անհրաժեշտությանը: Խոսվել է նաև հայ գիտնականների աշխատությունները օտար լեզուներով լույս ընծայելու, դրանք նաև էլեկտրոնային ռեսուրսներում ներկայացնելու գործընթացի կազմակերպման մասին: Ակադեմիկոսներն անդրադարձել են նաև այս օրերին ակտիվորեն քննարկվող Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը և հայտարարել, թե առոչում են ՀՀ նախագահին այս գործընթացում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ զեկուցումը

ՀՀ ԳԱԱ հարգելի անդամներ, հարգելի ներկաներ.

2009 թ. ՀՀ ԳԱԱ 27 ինստիտուտներում և 4 գիտական կենտրոններում շարունակվել են հիմնարար և կիրառական գիտական մշակումներ բազային ֆինանսավորմամբ, նպատակային և միջազգային ծրագրերով և պայմանագրային աշխատանքների ուղղությամբ:

2009 թվականին Գիտությունների ազգային ակադեմիայի կյանքում տեղի ունեցան երկու իրադարձություն, որոնք իրենց նշանակությամբ և կարևորությամբ նմանը չունեն Ակադեմիայի պատմության ընթացքում:

Դրանք ԳԱԱ-ի նախագահության կենտրոնական մասնաշենքի կապիտալ վերանորոգումն է, այդ թվում նաև այս դահլիճը, որտեղ ընթանում է մեր ժողովը և ՀՀ ԳԱԱ-ի մասին Հայաստանի Հանրապետության օրենքն է, որը գտնվում է Ազգային ժողովում՝ ընդունման պրոցեսում:

Նշված երկու իրադարձությունները իրականացվել են Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի անձնական նախաձեռնությամբ: Շտապելով հայտարարում եմ նաև նախագահի մեկ այլ նախաձեռնության մասին՝ 2011 թվականից ՀՀ Պետական մրցանակներ կշնորհվեն նաև գիտության ասպարեզում: Թույլ տվեք մեր հանրության անունից շնորհակալություն հայտնել հանրապետության նախագահին:

Ակադեմիայի ամբողջ համակարգում աշխատում են 3798 մարդ, որը 22-ով պակաս է քան 2008 թվին: Ակադեմիայի կազմում են 65 իսկական անդամ, 52 թղթակից անդամ, 66 արտասահմանյան անդամ, գիտության 335 դոկտոր և 1076 թեկնածու: Նախորդ տարվա համեմատությամբ գիտության դոկտորների թիվը աճել է 5-ով, իսկ թեկնածուների թիվը՝ 56-ով: Նկատելի է թեկնածուների թվի զգալի աճ, չնայած աշխատողների ընդհանուր թվի փոքրացմանը:

ՀՀ ԳԱԱ-ն ամբողջ իր պատմության, այդ թվում նաև 2009 թվին, խաղացել է երկրում հիմնարար ուսումնասիրությունները համակարգողի գլխավոր դերը և իրականացրել հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ: Հայաստանի գիտնականների կողմից ստացվել են տպավորիչ արդյունքներ: Ստեղծվել են գիտական դպրոցներ, որոնք ստացել են ինքնուրույն ճանաչում:

2009 թվականին գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների բարձր գիտական մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան բարձր հեղինակություն ունեցող գիտական ամսագրերում տպագրված աշխատանքների թիվը, որը կազմում է 709 գիտական հոդված և 12 մենագրություն, ինչպես նաև 65 միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

Հաշվետու տարում հատուկ ուշադրություն է դարձվել ներդրման կամ տեխնոլոգիական ինովացիաների նպատակով ակադեմիական գիտական հետազոտությունների արդյունքները տեխնոլոգիական ոլորտների փոխանցման գծով առաջարկություններին: 2009 թվականին նախապատրաստվեցին առաջարկություններ, որոնք ներկայացվեցին ՀՀ կառավարությանը երեք խմբերով՝ Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրեր, տեխնոլոգիաների մշակումները ապահովող ինֆրակառուցվածքների ստեղծման և զարգացման նախագծեր, ➤2

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ զեկուցումը

➢1 տեխնոլոգիաները շուկայական օգտագործմանը հասցնելու համար հետազոտական լրացուցիչ մշակումների նախագծեր:

ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտներում տեխնոլոգիական ինովացիաների խթանումը և հայտնաբերումը

Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծով նախատեսվում է խթանել գիտական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, նորամուծությունների և արտոնագրերի ավելացումը, ծնավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավումը դեպի գիտություն և ապահովել այդ գիտելիքների նպատակաուղղված ներդրումը կրթության և տնտեսության այս կամ այն ոլորտում: Ինովացիաները (նորամուծությունները) մարդու ինտելեկտուալ գործունեության վերջնական արդյունքներն են՝ նոր և նախորդներից տարբերվող օբյեկտների տեսքով: Նրանք շուկայում բնութագրվում են մարդկային գործունեության լրիվ նոր (կամ բարելավված) ապրանքների (ծառայությունների) ներդրմամբ, որոնք ունեն նոր որակ և բարձր գիտատեխնիկական պոտենցիալ: Մյուս կողմից ինովացիան ինվեստիցիա է նոր գիտելիքի մշակման և ստացման համար, որը բերում է որակական բարելավման: Այսինքն պահանջվում է ինվեստիցիա-մշակում - ներդրման պրոցես-որակական բարելավման ստացում: Ստորև ներկայացվում են ՀՀ ԳԱԱ համակարգի 2009 թ. իրականացված քայլերը ինստիտուտներում տեխնոլոգիական ինովացիաների խթանման և հայտնաբերման վերաբերյալ, առաջադրելով մի քանի հարցեր, առանց որոնց լուծման ուղղությունը դեպի գիտության արդյունքների օգտագործումը, ներդրումը տնտեսության մեջ կլինի անհնարին:

...Մեր կողմից ներկայացված էին նախագծեր հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ կենսաբանական համակարգեր, նյութեր, ինֆորմացիոն և ծրագրային համակարգեր, բնական ռեսուրսների օգտագործում, ինֆրակառուցվածքային համակարգեր, հետազոտական ծրագրեր: Նախագծերի ընդհանուր թիվը 46-ն է (տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի առաջարկներ-35, ինֆրակառուցվածքային-2, կիրառական բնույթի հետազոտություններ-9):

Թողնելով դժվարությունները՝ կապված առաջարկությունների պատշաճ տեսքով ներկայացնելու հետ՝ պետք է ընդունել, որ կառավարությունը, անկասկած, ուշադրությամբ վերաբերվեց մեր առաջարկներին:

Նշված քննարկումների արդյունքում որոշվեց կենտրոնանալ ութ նախագծի վրա, որոնք ունեին առավելություն և հաշվի առնելով արած դիտողությունները, լրացնելով փորձագիտական լրացուցիչ ուսումնասիրություններ մեկ անգամ ևս անդրադառնալ աշխատանքների ֆինանսավորման հարցերին: Այս փուլը տևեց կես տարի: Միայն վերջերս հնարավոր եղավ պարզել, որ կան լուծումներ: Նախագծերից երկուսի վերաբերյալ ստեղծվել է հնարավորություն, ստանալու վարկ որոշ պայմաններով, մեկի դեպքում կբավարարվի պահանջվող ոչ մեծ ծավալի ֆինանսավորումը միջին և փոքր ձեռնարկությունների զարգացմանը աջակցող կազմակերպության միջոցով, մեկ նախագիծ նորից կներկայացվի օպերատիվ շտաբի քննարկմանը:

Անհրաժեշտ է նշել, որ գիտական մշակումները արտադրությանը հասցնելու հարցում ոչ երկրորդական դեր է խաղում նաև տնտեսվարող սուբյեկտներից շատերի բացահայտ անտարբերությունը նորարարական առաջարկների նկատմամբ: Որպես բացառություն կարելի է բերել թերևս միայն Երևանի ոսկերչական գործարանի օրինակը, որը կոնստրուկտիվ համագործակցություն է իրականացնում ՀՀ ԳԱԱ-ի հետ:

Այս օրինակների վրա կարելի է ձևակերպել մի քանի խնդիրներ, որոնց լուծումները անհրաժեշտ է գտնել Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար:

* Պարզեցնել և ներկայացնել տեխնոլոգիական ինովացիաներ մշակելու նպատակով ինվեստիցիաների աղբյուրներից (պետական, պետական-մասնավոր, մասնավոր բիզնեսի, արտասահմանից) օգտվելու մեխանիզմները: Տարածել ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերը գիտական, գիտատեխնիկական հանրությանը, մասնագետներին: Ներկայացնել հնարավոր աջակցող պայմանները: Մասնավորապես հստակեցնել ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների կողմից պետական հովանավորությամբ վարկեր ստանալու հնարավորությունները:

* Ամրապնդել պետական գիտական կազմակերպությունների նկատմամբ իրավունքները այն մտավոր սեփականության համար, որը ստեղծված է պետական միջոցների հաշվին:

* Խրախուսել բիզնեսի ոլորտի ինվեստիցիաները գիտական հետազոտությունների մեջ: Տալ բիզնես-կազմակերպություններին հարկային պարտավորություններ, ապահովելով պարզ մեխանիզմներ գիտական հետազոտությունների և մշակույթի վրա կատարված ծախսերի հարկային դուրս գրման համար:

* Մասնակից դարձնել գիտական ինովացիոն հետազոտությունների արդյունքների օգտագործմանը պետական գերատեսչություններին՝ տեղական տեխնոլոգիաների զարգացմանը խթանելու նպատակով:

* Կազմակերպել հետազոտական կենտրոններ, որոնց նպատակն է՝ համախմբել գիտական արդյունքների կոմերցիալիզացիայի հետ կապված ծառայությունները: Մասնավորապես, նպատակահարմար է նման կառույց ստեղծել ՀՀ ԳԱԱ-ում:

Միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը

Միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը ուղղված է եղել նպաստելու ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և առանձին գիտնականների ավելի ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: 2009 թվականին այս ուղղությամբ կատարված աշխատանքները արդյունք են մեր համակարգի 3 ստորաբաժանումների ներդաշնակ համատեղ աշխատանքի: Դրանք են՝ Արտասահմանյան կապերի, Միջազգային գիտատեխնիկական ծրագրերի և Սփյուռքի բաժնի:

Համագործակցության ծրագրերը իրականացվել են ՀՀ ԳԱԱ-ի, Ռուսաստանի ԳԱ-ի, Հունգարիայի Հանրապետության ԳԱ-ի Բելառուսի ԳԱ-ի, Գերմանիայի Մաքս-Պլանկի ընկերության, Ֆրանսիայի CNRS կենտրոնի և այլ երկրների գիտական կենտրոնների հետ: Հաշվետու տարում համակարգում կատարվել են աշխատանքներ 68 տարբեր ծրագրերով, մոտ 1,5 միլիոն ԱՄՆ դոլար գումարով: Համեմատած նախորդ տարվա հետ ծրագրերի թիվը աճել է 16-ով՝ մոտ 0,5 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ:

Համագործակցության կարևոր առանձնահատկություններից է համատեղ գիտական ստորաբաժանումների ստեղծումը: Ինչպես նախորդ տարիներին արդյունավետ է աշխատել ՌԴ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի և մեր կենդանաբանության ինստիտուտի համատեղ լաբորատորիան ռուսական կողմի ֆինանսավորմամբ: 2009 թվականին կնքվեց պայմանագիր ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների և Ֆրանսիայի CNRS-ի միջև համատեղ լաբորատորիայի ստեղծման մասին համաֆինանսավորման սկզբունքով: Նախատեսվում է նմանատիպ լաբորատորիաներ կկազմակերպվել Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ:

Հաշվետու տարում միջազգային համագործակցության կարևոր մաս է հանդիսանում աշխատանքները կապված հիմնականում նորընտիր արտասահմանյան անդամների հետ: Արտասահմանյան անդամները հնարավոր համագործակցություն սկսելու նպատակով քննարկումներ են ունեցել ԳԱԱ, և ոչ միայն ԳԱԱ, համակարգի համապատասխան գիտական կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ համատեղ հետազոտությունների և հետազոտական նոր ծրագրերի իրագործման, ասպիրանտների համատեղ ղեկավարման, մասնագետների պատրաստման և վերապատրաստման, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքման, համատեղ աշխատությունների պատրաստման, ԳԱԱ տեղեկագրերի խմբագրական կազմերում ընդգրկման, Հայաստանում կազմակերպվող գիտաժողովների և սեմինարների մասնակցության, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպման վերաբերյալ:

(Շարունակելով թեման ՀՀ ԳԱԱ նախագահը մանրամասն կանգ առավ ԳԱԱ արտասահմանյան անդամների իրականացրած համագործակցության օրինակների վրա):

Համատեղ ծրագրերի իրականացում և առաջարկներ

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը նանոմասնիկների կառուցվածքային հետազոտությունների բնագավառում համագործակցում է արտասահմանյան անդամ Լ. Բուգաևվի (ՌԴ Հարավային դաշնային համալսարան, Դոնի Ռոստով) հետ: Նանոմասնիկների բազմակողմանի հետազոտությունները հնարավոր չէ լիովին կատարել ՖՀԻ-ում և ընդհանրապես Հայաստանում առկա սարքավորումներով, այդ պատճառով ԳԱԱ ֆինանսական աջակցությամբ ՖՀԻ երիտասարդ գիտաշխատող ֆ.մ.գ.թ. Ա. Մանուկյանը գործուղվել է Դոնի Ռոստովի համալսարան՝ համատեղ հետազոտություններ իրականացնելու համար:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը գիտական հաշվարկների և գրիդ ինֆրակառուցվածքների ուղղություններով համագործակցում է արտասահմանյան անդամ Բ. Բողոսյանի (ԱՄՆ, Թաֆտի համալսարանի պրոֆեսոր) հետ: Համատեղ պատրաստվել է ՍԳՏԿ «Remote Sensing Methods To Assess Heavy Metal Pollution in the Kura River Basin» նախագիծը:

ՀՀ կառավարությունում ուսումնասիրվում է ապակու որոշ տեսակների հումքի ստացման վերաբերյալ արտասահմանյան անդամ Ռ. Մելքոնյանի կողմից մշակված «Կանազիտ» բիզնես նախագծի ներդրման հարցը:

Արտասահմանյան անդամ Յու. Հարությունյանն առաջարկել էր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ սկսել համատեղ ծրագիր՝ Ռուսաստանում հայերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ կատարելու ուղղությամբ: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից մշակվել էր «Սեփական և այլազգի միջավայրերում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» թեմայով նախագիծը, որի իրականացման աջակցման համար ներկայացվել էր ՀՀ Սփյուռքի նախարարությանը: ՀՀ Սփյուռքի նախարարությունը կարևորելով նախագծի իրականացումը, դիմել էր ՀՀ վարչապետին: Եղել է վարչապետի հանձնարարականը Գիտության պետական կոմիտեին, սակայն նախագիծն ընթացք չի ստացել:

Արտասահմանյան անդամ Ռ. Չայլախյանի կողմից ներկայացվել է Հայաստանում բջջային տեխնոլոգիաների զարգացման առաջարկ:

Արտասահմանյան անդամ Ս. Այվազյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ Ռուս-Հայկական համալսարանի հետ մշակվում են «Հայաստանի Հանրապետության մակրոէկոնոմետրիկական մոդելավորումը» նախագծի տեխնիկական առաջադրանքի հիմնական դրույթները:

Արտասահմանյան անդամ Գ. Գաբրիելյանցի նախաձեռնությամբ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը Լեռնային Ղարաբաղի երկրաբանության լաբորատորիայի հետ սկսել է ԼՂՀ լեռնաարդյունաբերական համալիրի հանքա-հումքային բազայի ամրապնդման և ընդարձակման, նավթի և գազի հնարավոր կուտակումների հայտնաբերման հեռանկարների հետ կապված հարցերի քննարկում:

Արտասահմանյան անդամ, ՌԲԳԱ Սենդի ինստի- ➢3

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ զեկուցումը

➢2 տուտի տնօրեն Վ. Թուտելյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկել է իր ղեկավարած ինստիտուտի աջակցությունը ՀՀ-ում սննդանյութերի պատրաստման տեխնոլոգիաների ներդրման և անվտանգ սննդանյութերի արտահանման հնարավորության ուսումնասիրման համար: Նա իր ղեկավարած ինստիտուտում կազմակերպել է ՀՀ-ում սննդանյութեր արտադրող մի շարք կազմակերպությունների արտադրանքի փորձաքննություն:

Մեծ է Վ. Թուտելյանի աջակցությունը և օգնությունը իր ղեկավարած ինստիտուտում «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ում մշակված նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված վեց նոր տեսակի հյութերի և նեկտարների փորձաքննության և սերտիֆիկացման աշխատանքներում: Նշված արտադրատեսակները ստացել են մարդու առողջության ապահովման և սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ՌԴ դաշնային տեսչության ծառայության կողմից պետական գրանցում, ընդգրկվել են պետական ռեեստրում և թույլատրվել ՌԴ տարածքում արտադրելու, ներմուծելու և շրջանառելու: Այդ արտադրատեսակները սերտիֆիկացվել են նաև ՀՀ-ում: «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի ղեկավարությունը հայտնելով խորին շնորհակալություն Վ. Թուտելյանին, տեղեկացրել է, որ նշված սննդատեսակներն արտադրական փորձարկումների ավարտական փուլում են, շուտով կսկսվի արտադրությունը ու այն կհանդիսանա մանկական սննդի կարևոր բաղկացուցիչ:

Արտասահմանյան անդամների մի մասը շարունակում են նախկինում սկսած համագործակցությունը:

Պետք է նշել, որ արտասահմանյան որոշ անդամների և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության համար ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում, պարբերաբար քննարկումների արդյունքում մի շարք կազմակերպությունների (Քիմիական՝ ֆիզիկական հետազոտությունների, Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտներ) հետ արդեն հստակեցվել և ձևակերպվել են համատեղ հետազոտությունների խնդիրները: Նշենք նաև, որ կիրառական բնույթի հետազոտություններում հիմնականում նախատեսվում է օգտագործել արտասահմանյան անդամների լաբորատորիաների նորագույն սարքավորումները և վերլուծական հնարավորությունները:

Արտասահմանյան անդամներ Յու. Հովհաննիսյանը, Ա. Ապրահամյանը և Ֆ. Ահարոնյանը, որպես 2009 թ. մայիսի 20-ին ՀՀ վարչապետի հրամանով ստեղծված միջազգային անկախ փորձագետների հանձնաժողովի անդամներ, մասնակցել են Երևանի Ա.Ի.Ալիխանյանի անվ. ֆիզիկայի ինստիտուտի հետ կապված խնդրի քննարկմանը:

Գիտական կադրեր

2010 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ կազմում ընդգրկված են 65 ակադեմիկոս և 53 թղթակից անդամ

Հաշվետու տարում աշխատանքից ազատվել են 8 դոկտոր և 59 թեկնածու, ընդունվել են 4 դոկտոր, 39 թեկնածու, 169 երիտասարդ մասնագետ, որից 48-ը ընթացիկ տարվա շրջանավարտներ են: Համակարգի աշխատակիցներից 6-ը պաշտպանել են դոկտորական, 59-ը՝ թեկնածուական ատենախոսություններ:

Համակարգի գիտական կադրերի պատրաստումը իրականացվում է գործող ասպիրանտական համակարգով: Հաշվետու տարում ԳԱԱ ասպիրանտուրայում պետպատվերով սովորում էին 210 ասպիրանտ, այդ թվում 99-ը արտադրությունից կտրված, 11-ը արտադրությունից չկտրված, վճարովի հիմունքներով՝ 72-ը: Հաշվետու տարում ընդունվել են 1 դոկտորանտ, արտադրությունից կտրված 35 ասպիրանտ, արտադրությունից չկտրված 12 ասպիրանտ: Վճարովի հիմունքներով մագիստրոսական ուսուցում ստանալը ԳԱԱ-ում շատերին է հրապուրում և տարեցտարի ավելանում է ցանկացողների թիվը: Կարևոր է ընդգծել, որ ավելանում է ուսանողների թիվը տարածաշրջանի արտասահմանյան երկրներից:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ստեղծվում է բուհ-ական համակարգի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան շահագրգռված լինելով ստանալու բարձր որակավորման մասնագետներ, ակտիվ համագործակցության մեջ է մեր առաջատար բուհ-երի հետ: Համագործակցությունը ներառում է համատեղ գիտական հետազոտությունները, որը իրականացվում է ստեղծված համատեղ գիտական և ուսումնական կառույցների օգնությամբ: Նման համագործակցություն է ստեղծված ԵՊՀ-ի, Սլավոնական, Ճարտագիտական համալսարանների, Գյուղատնտեսական ակադեմիայի և մանկավարժական բուհերի հետ: Բարձր որակավորման կադրերի պատրաստման ժամանակակից չափանիշները պահանջում են փնտրել համագործակցության նոր ձևեր:

Ընդհանուր առմամբ հաշվետու տարում ԳԱԱ-ի 260 առաջատար մասնագետ մասնակցել են ուսումնական և գիտական համատեղ աշխատանքի: Այդ համագործակցության արդյունքում համատեղ տպագրվել են 154 գիտական հոդվածներ և գիտաժողովների 54 թեզիսներ:

Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում

2009 թ. ՀՀ ԳԱԱ ամբողջ համակարգի համար պետական ֆինանսավորումը կազմել է 4008 միլիոն դրամ, որից 3346 միլիոնը կազմել է բազային և այլ ֆինանսավորում, իսկ թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորումը կազմել է 591 միլիոն դրամ: Նպատակային ծրագրերի ֆինանսավորումը կազմել է 70 միլիոն դրամ: Հատկացվել է նաև տարբեր չափի նպատակային գումարներ: Կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 22,3 միլիոն դրամ Վ.Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի աշխատանքների և հոբելյանական տարբեր միջոցառումների կազմակերպման համար: Հաշվետու տարում ընդհանուր աշխատավարձի ֆոնդը ավելացել է նախորդ տարվա հետ համեմատած 6%-ով, որը ուղղվել է մինիմալ աշխատավարձի բարձրացմանը՝ մինչև 30 000 դրամ: ԳԱԱ-ի ընդհանուր համակարգի ամբողջ աշխատավարձի ֆոնդը կազմել է բյուջեից հատկացված միջոցների մոտ 70%-ը: Համակարգի ընդհանուր միջին աշխատավարձը բոլոր աղբյուրներից կազմել է 57,6 հազար դրամ:

Ընդհանուր ֆինանսավորումը 2009 և 2010 թվականին ճգնաժամի պայմաններում մնացել է անփոփոխ՝ չնայած գոյություն ունեցող ինֆլյացիոն պրոցեսները իջեցրել են ընդհանուր գնողունակությունը: Հաշվետու տարում որոշակի աշխատանք է կատարվել արտաբյուջետային միջոցների ձեռք բերման ուղղությամբ: Գիտական կազմակերպությունները շարունակել են մասնակցել միջազգային գիտական կենտրոնների և հիմնադրամների կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերին: 2009 թվականին համակարգի աշխատողները կատարել են աշխատանքներ 68 տարբեր դրամաշնորհներով, որոնց ընդհանուր գումարը կազմել է մոտ 4,4 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ 2009 թվականի բաժինը 1,4 միլիոն ԱՄՆ դոլար:

Բացի դրամաշնորհային ակտիվ գործունեությունից մի շարք ինստիտուտներում կատարվել են նաև պայմանագրային աշխատանքներ, որոնք հիմնականում գիտական արդյունքների ներդրման շնորհիվ ստեղծված նոր սարքեր և սարքավորումներ են: Հաշվետու տարում ՌՖԷԻ-ի ֆինանսավորման ընդհանուր ծավալը կազմել է 316 միլիոն դրամ, որի միայն մեկ երրորդն է ստացվել պետական բյուջեից: Այդ տիպի աշխատանքների ծավալը մի շարք ինստիտուտներում կարելի է ավելացնել կատարելով փոքր ծավալի ներդրումներ: Ինստիտուտների կողմից ստացված արտաբյուջետային գումարների ծավալը կազմել է 1327 միլիոն դրամ, որը կազմում է ընդհանուր տարեկան ֆինանսավորման մոտ 30%: Տնտեսահաշվարկային սկզբունքով աշխատող հիմնարկների և համատեղ ձեռնարկությունների կողմից կատարված աշխատանքների ընդհանուր ծավալը հաշվետու տարում կազմել է 200 միլիոն դրամ գումարային արտահայտությամբ:

Եթե առաջիկա մեկ երկու տարիների ընթացքում կատարվեն ոչ մեծ չափի ներդրումներ կառույցների նյութատեխնիկական բազան քիչ թե շատ արդիականացնելու և մի շարք աշխատանքներ ներդրման փուլին մոտեցնելու դեպքում ստացված արդյունքները կարելի կլինի էապես ավելացնել:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ակադեմիայի համակարգում գործում են 30 գրադարաններ՝ Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) և ակադեմիական ինստիտուտների 29 ճյուղային-մասնագիտական գրադարանները:

ՀԳԳ իր հավաքածուներում ունի 3001280 գրադ. մ., որից 854029՝ եվրոպական լեզուներով: Համալրման բոլոր աղբյուրներով գրադարանն այս տարի ձեռք է բերել 7969 գրադ. մ. (այդ թվում 2906 մ. գիրք, պարբերականների 4387 մ. և 676 այլ նյութեր):

Ակադեմիական գրադարաններից օգտվել է 22029 ընթերցող, որոնց սպասարկվել է 438410 գրադ. մ.:

ՀԳԳ միջազգային գրքափոխանակության գծով հաստատված կապեր ունի արտասահմանյան և ԱՊՀ երկրների 353 կազմակերպությունների հետ, որոնցից ստացվել է 1698 գրադ. մ. (282 մ. գիրք, 1416 մ. ամսագիր և այլ նյութեր): Արտասահմանյան գործընկերներին առաքվել է 1511 մ. հրատարակություն (194 մ. գիրք, 1317 մ. ամսագիր):

Գիտաշխատողների, ուսանողների և ասպիրանտների տեղեկատվական հարցումների առավել լիարժեք բավարարման համար շարունակվում է մի շարք բարձրարժեք էլեկտրոնային ամսագրային հավաքածուների տրամադրումը: Այսպես, իրականացվել է «Britannica» հանրագիտարանի, «EBSCO-Publishing»–ի, «Oxford Reference Online»–ի և «Sage Online»–ի էլեկտրոնային պաշարների բաժանորդագրությունը: Բանակցություններն այլ հրատարակիչների հետ շարունակվում են:

Ներքին ռեսուրսների հաշվին ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցների պատվերներով գրադարանն իրականացրել է ավելի քան 312 էլեկտրոնային գիտական հոդվածների անվճար առաքում: Սկսվել է գիտական գրականության էլեկտրոնային տարբերակների ձեռքբերման և ընթերցողներին տրամադրման գործընթացը: Գրադարանի էլեկտրոնային քարտարան է ներմուծվել և նկարագրվել 504 մ. էլեկտրոնային գիրք՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Էլեկտրոնային գրքերը հասանելի են գրադարանի ներքին համակարգչային ցանցից:

Շարունակվել են ՀԳԳ էլեկտրոնային քարտարանի ձևավորման աշխատանքները. քարտարան է մուտքագրվել 59000 գրադ. մ. (21.000 անուն) գիրք, պարբերական հրատարակություններ և սեղմագրեր, որից 6015 մ. նոր ստացված գրականություն է: Ներկայումս գրադարանի մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրված է 333.700 գրադ. մ.: Ամբողջովին ավարտված է հայալեզու գրականության մուտքագրումը և ընթացքի մեջ է ռուսալեզու առաջին և երկրորդ ձևաչափերով նյութերի մուտքագրումն էլեկտրոնային քարտարան:

Գրադարանը իրականացնում է երկարաժամկետ պահպանության համար հայ հնատիպ գրքի թվայնացում (Բրիտանական գրադարանի «Վտանգված արխիվներ» ծրագիր), որի հիմնական նպատակն է գրանցել գրադարանի հնատիպ գրքերի հավաքածուն և XIX-րդ դարի հայատառ ամսագրերը և թերթերը: Ներկայումս թվայնացված է 127 հնատիպ գիրք և «Մուրճ» ու «Արարատ» ամսագրերի 235 համար:

Սոցիալական խնդիրները

Հաշվետու տարում, հնարավորությունների սահմաններում, սոցիալական հարցերը եղել են ուշադրության կենտրոնում: Առաջին հերթին նկատի ունենք աշխատավարձը: Ամբողջ համակարգի միջին աշխատավարձը կազմել է 57,5 հազար դրամ: Նախորդ տարում այն կազմել է 51,5 հազար դրամ: Փոքր տարբերությունը հաշվետու տարում պայմանավորված է մինիմալ աշխատավարձի փոքր ավելացումով, այն էլ շատ ցածր աշխատավարձ ստացողների համար: Նշված միջին աշխատավարձի հաշվարկը վերաբերում է միայն պետական բյուջեից ստացված ֆինանսական աղբյուրներից: Բացի պետբյուջեից կազմակերպությունները ֆինանսավորում են ստացել միջազգային համագործակցությունից և պայմանագրային աշխատանքներից, որոնց մեծ մասը կազմում է աշխատավարձի ֆոնդը: Եթե հաշվի առնենք այդ մասը, ապա միջին աշխատավարձը էապես կաճի: Վերջին դեպքում նշված ծրագրերին բոլոր աշխատողները չեն մասնակցում:

Ոչ մեծ ծավալի սոցիալական բնույթի գործունեություն է կատարել ԳԱԱ-ի «Գիտության զարգացման հիմնադրամը»: Այդ խողովակով համակարգի 18 աշխատողներ 12 կազմակերպություններ նյութական օգնություն են ստացել: Այս բնույթի գործունեությունը կաճի, եթե հիմնադրամի միջոցները տարեց տարի ավելանա:

Սոցիալական խնդիրների մեջ կարևոր տեղ է գրավում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավումը: Այս առումով էական առաջընթաց չենք ունեցել, որովհետև 2-3 տասնամյակների ընթացքում չեն վերանորոգվել հիմնարկների մասնաշենքերը, լաբորատորիաները՝ գիտության ամբողջ ինֆրակառուցվածքը: Չհաշված դրամաշնորհներով ձեռք բերված սահմանափակ թվով սարքավորումները գիտության փորձարարական հենքը մաշվել և հնացել է ֆիզիկապես և բարոյապես: Եթե մոտակա տարիներին չհաջողվի լրացնել նվազագույն պահանջարկը, ապա կստանանք անդառնալի հետադարձ ընթացք:

Հանգստի կազմակերպման առումով հաշվետու տարում ավարտվել են Արզաքանի սիմպոզիումների տան գիտաժողովների դահլիճների ցուցադրական տեխնիկայի տեղադրումը, հանգստի դահլիճի վերանորոգումը և կահավորումը: Այսօր այնտեղ կարող ենք անցկացնել, մինչև 100 մասնակիցներով, գիտաժողովներ և հանդիպումներ: Ստեղծված են նորմալ պայմաններ աշխատողների կարճատև և երկարատև հանգստի համար: Ինստիտուտների տնօրեններից պահանջում ենք, որպեսզի տարբեր բնույթի գիտաժողովները անցկացնեն այնտեղ և ոչ այլ վայրերում, որտեղ գները ավելի բարձր են, քան մեր մոտ:

Ժողովի հարգելի մասնակիցներ,

Պարզ է, որ մեկ զեկուցման մեջ դժվար է ներկայացնել մեր համակարգի բոլոր ստորաբաժանումների ձեռքբերումները ու բացթողումները: Հուսով եմ, որ ակտիվ գործնական քննարկման ընթացքում ձեր ելույթներում կնշեք մեր կարևոր անելիքները գիտության ասպարեզում, ինչը կնպաստի մեր երկրում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության զարգացմանը:

***

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի զեկուցումը տպագրվում է մասնակի կրճատումներով: Նշենք նաև, որ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի խոսքը ուղեկցվում էր լուսապատկերների, դիագրամների և աղյուսակների ցուցադրումով և դրանց մեկնաբանությամբ:

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Վիկտոր ԹՈՒՏԵԼՅԱՆ

ԳԱԱ սփյուռքի բաժինը «Գիտություն» թերթի միջոցով շարունակում է ներկայացնել ԳԱԱ արտասահմանյան անդամներին՝ հայազգի նշանավոր գիտնականներին, ովքեր մեծ ավանդ ունեն Հայաստան-սփյուռք գիտական կամրջի ամրապնդման գործում:



ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Ալեքսանդրի Թուտելյանը ծնվել է 1942թ. փետրվարի 8-ին, Մոսկվայում: 1959թ. երիտասարդ Թուտելյանն ընդունվեց Ի.Մ.Սեչենովի անվան 1-ին բժշկական ինստիտուտը (այժմ այն հայտնի է որպես Մոսկվայի Ի.Մ.Սեչենովի անվան բժշկական ակադեմիա): Ուսման տարիներին ցուցաբերելով բարձր առաջադիմություն, Թուտելյանը իր հետագա ողջ կյանքը վճռեց կապել բժշկագիտության հետ: 1965թ. ավարտելով բժշկական ինստիտուտն ընդունվեց ԽՍՀՄ-ի բժշկական գիտությունների ակադեմիայի սննդի ինստիտուտի ասպիրանտուրա: 1968թ. Թուտելյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը՝ մասնագիտանալով կենսաքիմիայի ոլորտում: Նույն տարում նա աշխատանքի անցավ ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի սննդի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: Իսկ 1971թ. նա դարձավ նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1976թ. գնահատելով նրա գիտական մեծ հնարավորությունները և ներդրումը գիտության մեջ, Թուտելյանին վստահվեց բժշկական գիտությունների ակադեմիայի սննդի ինստիտուտում ֆերմենտաբանության (էնզիմոլոգիայի) լաբորատորիայի ղեկավարումը:

1977թ. 35 ամյա Թուտելյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը՝ ավելի մասնագիտանալով կենսաքիմիայի ոլորտում: Նա «Միկոտոքսիններ»-ի ամենախոշոր մասնագետն էր ԽՍՀՄ շրջանակներում: 1980թ. նրան արդեն վստահվել էր Սննդի ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը: Գնահատելով նրա գործունեությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով նաև դասախոսական կենսագրությունը, 1986թ. նրան շնորհվեց պրոֆեսորի կոչում:

Թուտելյանը պարբերաբար կազմակերպում է քունաբանության ոլորտին նվիրված միջազգային կոնֆերանսներ, սեմինարներ, դպրոցներ: Դրա վառ օրինակ է 1980թ. Երևանում և Մոսկվայում բացված միջազգային դպրոցը, որին մասնակցեցին բազմաթիվ հայ գիտնականներ:

Վ.Ա.Թուտելյանը շարունակում էր վեր բարձրանալ գիտական բարդ աստիճաններով: 1993թ. նա դարձավ Բժշկական գիտությունների ռուսական ակադեմիայի թղթակից անդամ (քունաբանության մասնագիտությամբ), իսկ մեկ տարի անց՝ 1994թ. նա գլխավորեց Ի.Մ.Սեչենովի անվան մոսկովյան բժշկական ակադեմիայի սննդի հիգիենայի և տոքսիկոլոգիայի բաժինը:

1997թ. Վ.Ա.Թուտելյանն ընտրվեց Բժշկական գիտությունների ռուսական ակադեմիայի ակադեմիկոս, իսկ 2000թ. մինչ օրս զբաղեցնում է ՌԲԳԱ Սննդի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Հաշվի առնելով Վիկտոր Թուտելյան գիտնականի համաշխարհային ճանաչումը ու սերտ կապերը Հայաստանի հետ և բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան 2008թ. նրան ընտրեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ: Եվ բոլորի համար հիշարժան էր Վիկտոր Թուտելյանի խոսքը 2009թ. ԳԱԱ ընդհանուր ժողովի ժամանակ. *«Երբ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայից ես ստացա առաջին նամակը, իմ մտքում ասացի՝ եկել է ժամանակը, որ վճարեմ պարտքերս, դա արյան կանչ էր, որ գալիս էր հայրենիքից»:*

Վ. Թուտելյանն այսօր անդամակցում է ավելի քան 15 գիտական ընկերությունների: Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետ է, ՖԱՕ-ի (ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության) միասնական հանձնաժողովի անդամ: Նա գիտական վեց հանդեսի գլխավոր խմբագիր է, 20 ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, 25 մենագրությունների հեղինակ, որոնցից «Սելենը մարդու օրգանիզմում» աշխատությունը 2000թ. Մոսկվայի Ի.Մ.-Սեչենովի անվան բժշկական ակադեմիան հայտարարեց տարվա լավագույն մենագրություն:

Վիկտոր Թուտելյանը համաշխարհային ճանաչման է արժանացել հատկապես սննդի քունաբանության՝ հիմնականում քսենոբիոտիկների քունավոր ազդեցությունների և սնման բնույթի փոփոխությունների հանդեպ օրգանիզմի հարմարվողականության (ադապտացիայի) գործընթացներում միկրոսոմալ և լիզոսոմալ ֆերմենտների դերի հետազոտման ընագավառում:

Այդ հետազոտությունների արդյունքներն արձանագրվել են մի շարք մենագրություններում՝ «Լիզոսոմը» «Ֆլավոքսին» և այլն:

Վ. Թուտելյանը մինչ օրս մեծ ուշադրություն է դարձնում նաև մանկավարժական գործունեությանը: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանել են 12 դոկտորներ և 38 գիտության թեկնածուներ, որը իրական հենք է ստեղծում Վ. Թուտելյանի գործը լավագույնս շարունակելու համար: Վ.-Թուտելյանը նաև մեծ հոգածություն է ցուցաբերում հայ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը: Նա ԵՊՀ ավագ գիտաշխատող Կ.Գրիգորյանի դոկտորական ատենախոսության խորհրդատուն է:

Վերջին տարիներին Թուտելյանը իրականացնում է մշակումներ Ռուսաստանի պետական քաղաքականության ոլորտում բնակչության առողջ սննդի շրջանակներում: Հիմնարար այդ ուսումնասիրությունները զետեղված են «Առողջ սննդի քաղաքականություն: Դաշնային և վարչական մակարդակները» հայտնի մենագրության մեջ:

Թուտելյանի անմիջական ջանքերով ստեղծվել էր աշխատանքային մի խումբ, որի արդյունքում 2000թ. մշակվեց «Ռրակյալ և անվտանգ սննդային ապրանքների մասին» ՌԴ N 29 օրենքը, ինչպես նաև 1998թ. ՌԴ կառավարության N 917 որոշումը. «Մինչև 2005 թ. ՌԴ բնակչության առողջ սննդի պետական քաղաքականության հայեցակարգը»:



Վ. Թուտելյանի գործընկերները նրան միանշանակ բնութագրում են որպես լայնախոհ, բացառիկ աշխատասեր, պատասխանատվության բարձր զգացողությամբ անձնավորություն, ով իր առաջ կանգնած խնդիրները պետականամետ մոտեցմամբ է լուծում:

Մեր հայրենակից Վիկտոր Թուտելյանը Ֆ.Ֆ.Էրիսմանի, Ա.Ա. Պոկրովսկու և Թ.Ի. Երոշևսկու անվան մրցանակների դափնեկիր է, պարգևատրվել է «Պատվո շքանշանով», «Անձնվեր աշխատանքի» մեդալով և այլն:

Այսօր էլ Թուտելյանն ակտիվորեն համագործակցում է հայ գործընկերների հետ: ՌԲԳԱ Սննդի ինստիտուտի տնօրեն Վ. Թուտելյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկել է իր ղեկավարած ինստիտուտի աջակցությունը ՀՀ-ում սննդանյութերի պատրաստման տեխնոլոգիաների ներդրման և անվտանգ սննդանյութերի արտահանման հնարավորության ուսումնասիրման գործում: Նա իր ղեկավարած ինստիտուտում կազմակերպել է ՀՀ-ում սննդանյութեր արտադրող մի շարք կազմակերպությունների արտադրանքի փորձաքննություն:

Մեծ է Վ. Թուտելյանի աջակցությունը և օգնությունը իր ղեկավարած ինստիտուտում «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ում մշակված նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված վեց նոր տեսակի հյութերի և նեկտարների փորձաքննության և սերտիֆիկացման աշխատանքներում: Նրա ջանքերով նշված արտադրատեսակները ստացել են մարդու առողջության ապահովման և սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ՌԴ դաշնային տեսչության ծառայության կողմից պետական գրանցում, ընդգրկվել են պետական ռեեստրում և թույլատրվել ՌԴ տարածքում արտադրելու, ներմուծելու և շրջանառելու: Այդ արտադրատեսակները սերտիֆիկացվել են նաև ՀՀ-ում: ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժին ներկայացված նամակում «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի ղեկավարությունը խորին շնորհակալություն հայտնելով Վ. Թուտելյանին, տեղեկացրել է նաև, որ նշված սննդատեսակներն արտադրական փորձարկումների ավարտական փուլում են և շուտով կսկսվի արտադրությունն ու այն կհանդիսանա մանկական սննդի կարևոր բաղկացուցիչ:

Նա բազմիցս արտահայտել է իր պատրաստակամության մասին՝ համագործակցելու ՀՀ սննդամթերք արտադրող բոլոր ընկերությունների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

Սամվել ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր Սամվել Սամվելի Գրիգորյանը ծնվել է 1929թ. մարտի 18-ին Լեռնային Ղարաբաղում:

Նախնական կրթությունը Գրիգորյանը ստացել է Ղարաբաղի և Բաքվի մի շարք դպրոցներում. 1948թ. ոսկե մեդալով ավարտել է Բաքվի N 164 ռուսական միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1953 թվականին, գերազանցությամբ:

Գրիգորյանի ընդհանուր կրթության վրա մեծապես ազդել են այդ ժամանակաշրջանի լավագույն գիտնականների դասախոսությունները. Կ.Ա.Կուլիկովի, ով դասավանդում էր աստղագիտություն, Ա.Գ.Կուրոշի՝ բարձրագույն մաթեմատիկա, Ս.Բ.Բախվալովի՝ վերլուծական երկրաչափություն, Ա.Խինչինի՝ մաթեմատիկական անալիզ, Լ.Ի.Սեդովի՝ հիդրոմեխանիկա, Մ.Վ. Կելդիշի հատուկ կուրսը և այլն: 1953թ.-ին նա ընդունվում է մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրա, գիտական ղեկավարն էր ակադեմիկոս Լ.Ի.Սեդովը: 1956 թվականին ավարտելով ասպիրանտուրան՝ նա պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Բարակ մարմինների հիդրոդինամիկայի որոշ խնդիրներ» թեմայով և ստանում ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան:

1956-1959թթ. նա աշխատում էր Մոսկվայի պետական համալսարանի մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետի հիդրոմեխանիկայի ամբիոնում, որպես կրտսեր գիտաշխատող: Իսկ 1958-59թթ.-ին համատեղության կարգով աշխատում էր նաև Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում՝ որպես ակադեմիկոս Մ.Ա.Լավրենտևի օգնական:

Շուրջ երեք ամիս երիտասարդ գիտնական Սամվել Գրիգորյանը հանդես է եկել գերձայնային արագության աէրոդինամիկայի մասին դասախոսություններով և գիտական աշխատանքներ է կատարել Պեկինի համալսարանի հիդրո-աէրոդինամիկայի բաժնում: Այդ աշխատանքների համար 1960թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը նրան պարգևատրեց «Խորհրդա-չինական բարեկամության» մեդալով:

1959թ.-ին, երբ Մոսկվայի պետական համալսարանում բացվեց Մեխանիկայի ինստիտուտ, նա այդ հաստատությունում դարձավ ավագ գիտաշխատող, իսկ 1962թ-ից մինչև 1981թ. զբաղեցրեց այդ նույն ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը:

1965թ. Սամվել Գրիգորյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «Բնահողերի մեխանիկայի վերաբերյալ ուսումնասիրություններ» թեմայով և ստացավ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան:

Սամվել Գրիգորյանի ողջ գիտական կյանքը կապված է Մոսկվայի պետական համալսարանի հետ: 1981-1992թ. ինստիտուտի Մեխանիկայի բնական պրոցեսների բաժնի վարիչն էր, իսկ արդեն 1992-ից մինչև 2001թ.՝ ինստիտուտի տնօրենը: 2001թ.-ից ի վեր մեծանուն գիտնականը ինստիտուտի մեխանիկայի բնական պրոցեսների լաբորատորիայի վարիչն է: Նրա անմիջական ղեկավարությամբ 40 գիտնական ստացել են գիտությունների թեկնածուի և 10-ը՝ դոկտորի աստիճան՝ ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, բժշկագիտության, կենսաբանության, ➤5

➢4 աշխարհագրական, երկրաբանական և հանքային ջրերի գիտության ոլորտներում:

Հաշվի առնելով Սամվել Գրիգորյանի երկար տարիների մանկավարժական աշխատանքը՝ 1968թ. նրան շնորհվեց պրոֆեսորի կոչում, իսկ 1997թ. նա դարձավ Մոսկվայի պետական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր:

Չթվարկելով Սամվել Գրիգորյանի գիտական բազմաթիվ արդյունքները, միայն նշենք, որ այդ արդյունքների հիման վրա նա հրատարակել է 300 գիտական աշխատանք, այդ թվում "Аэромеханика сверхзвукового обтекания тел вращения степенной формы" (1975), "Механика ледников" (1977), "Количественная теория геокриологического режима" (1978) և այլ մենագրություններ: Նա 70 գյուտի և արտոնագրի հեղինակ է:

Գիտության մեջ նրա ներդրումն ըստ արժանվույն գնահատվել է պետության կողմից. 1986թ. ԽՍՀՄ ԳԱ-ի կողմից Սամվել Գրիգորյանը ստացավ Ոսկե մեդալ և Մ. Ա. Լավրենտևի անվան մրցանակ, 1970թ. Ս.Ա. Չապլիգինի անվան մրցանակ, 1967թ. Մ.Վ.Լոմոնոսովի անվան մրցանակ ստորգետնյա պայթյունների խնդրի լուծման համար, 1985թ. արժանացավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի մրցանակին, 1991թ. ստացավ Ուկրաինայի պետական մրցանակը, 2004թ. Ս.Ն.Ֆեոդորովի անվան մրցանակը, 2000թ. արժանացավ «Գիտության և արվեստի ասպետի» կոչման և շքանշանի:

Սամվել Գրիգորյանը ընտրվել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (1987), Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (2000), Աստղագիտության միջազգային ակադեմիայի անդամ (1972), Ռուսաստանի հրթիռների և հրետանու գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1993), նա նաև այլ ակադեմիաների անդամ է:

Հաշվի առնելով Սամվել Գրիգորյան գիտնականի համաշխարհային ճանաչումը և սերտ կապերը Հայաստանի հետ ու բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան 2000թ. նրան ընտրել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Սամվել Գրիգորյանը մի շարք ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ է, այդ թվում «Կիրառական մաթեմատիկա և մեխանիկա», «Կիրառական մեխանիկա և տեխնիկական ֆիզիկա» ամսագրերի: Նա ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի Ազգային կոմիտեի, ինչպես նաև կիրառական մաթեմատիկայի և մեխանիկայի Միջազգային ասոցիացիայի անդամ է:

1990-ական թվականներին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Սամվել Գրիգորյանը ակտիվորեն զբաղվել է հասարակական գործունեությամբ, հիմնականում Ռուսաստանում հայկական սփյուռքի խնդիրներով: Նա Մոսկվայի Հայ համայնքի առաջին հիմնադիրն էր և ղեկավարը, Համաշխարհային հայկական կոնգրեսի խորհրդի համահիմնադիրը և անդամը: Պարգևատրվել է Ռուսաստանի հայերի միության բարձրագույն «Արծաթե խաչ» շքանշանով: Իր ակտիվ գործունեության համար Մոսկվայի կառավարության կողմից պարգևատրվել է «Մոսկվայի 850-ամյակի» շքանշանով:

Ս.Գրիգորյանը ճշմարիտ հայրենասեր է, պատրաստել է մի շարք գիտական կադրեր հայրենիքի համար, կազմակերպել է միջազգային գիտաժողովներ Հայաստանում և Արցախում:

Սամվել Գրիգորյանը Մոսկվայի կառավարությանը կից միջազգային խորհրդակցական խորհրդի մշտական անդամ է: 1990-ական թվականների սկզբներին նա ընտրվել է պատգամավոր անկախ Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում:

Սամվել Գրիգորյանը 2010թ. ապրիլի 21-23-ին մասնակցեց ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովին և հանդես եկավ "О некоторых современных задачах астрофизики" ուշագրավ զեկույցով:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի
գիտքարտուղար

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՏՆԻ ՄԱՍՆԱԳԵՏ ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ՀՀ ԳԱԱ ՎԱՍՏԱԿԱԳՐՈՎ

Հայրենական մեծ պատերազմի պատմության ոլորտում ունեցած մեծ վաստակի համար ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանին 70-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը ապրիլի 20-ին պարգևատրեց ՀՀ ԳԱԱ վաստակագրով: «Կլիմենտ Հարությունյանը այս տարիների ընթացքում իրեն փայլուն է դրսևորել որպես պատմաբան և հետազոտող»,- իր շնորհավորական ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը:

Կլիմենտ Հարությունյանի գրքերը նվիրված են ինչպես ամբողջ պատերազմին, այնպես էլ հայկական դիվիզիաներին ու ռազմական գործողություններին՝ ըստ երկրների տարածքի: «Ոչ թե իմ աշխատանքն է գնահատվում, այլ հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին»,- իր պատասխան ելույթում ասաց հոբելյարը:

ՀՀ ԳԱԱ ԷԿՈԼՈԳՈՆՈՍՈՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԶԳԱՅՎՈՒՄ Է ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կլիմայի փոփոխության հիմնահարցերը և դրա հետ կապված Հայաստանում տիրող իրավիճակը ՀՀ ԳԱԱ նախագահությանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթելյանը: Նա ներկայացրեց աշխարհում գոյություն ունեցող գլոբալ տաքացման մոդելները, ծանոթացրեց կլիմայի փոփոխության վերաբերյալ իրարամերժ կարծիքներին, համաշխարհային տնտեսության առաջնորդ երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի քաղաքական դիրքորոշումներին: Արմեն Սաղաթելյանը նշեց, որ Հայաստանում կլիմայի փոփոխության հետևանքով ամենից շատ կտուժի գյուղատնտեսությունը, և որ այդ նախանշաններն արդեն նկատվում են: ՀՀ ԳԱԱ նախագահությունը հավանություն տվեց գլոբալ տաքացման հիմնախնդիրների ուսումնասիրություններին, քանի որ նման մարտահրավերները հաղթահարելու համար գիտական հիմքեր են անհրաժեշտ:

Արամ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ



Հայագիտությունը ծանր ու անվերադարձ կորուստ ունեցավ: Այլևս մեր կողքին չէ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի խորհրդական Արամ Աշոտի Քալանթարյանը: Ծնվել է 1937 թ. Սուխումի քաղաքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում (1955-1959 թթ.):

Արդեն ասպիրանտական ուսումնառության տարիներին ձևավորվեց նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը, այն է՝ միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրությունն իր բազմակողմ դրսևորումներով, իսկ նշանավոր մայրաքաղաք Դվինը դարձավ նրա հնագիտական ուսումնասիրությունների գլխավոր ու հիմնական օբյեկտը, մինչև 1977 թ. լինելով արշավախմբի անդամ, պետի տեղակալ, իսկ այնուհետև իր ուսուցիչ, մեծահամբավ հնագետ պատմաբան, պրոֆեսոր Կարո Դանիելյանի մահից հետո մինչ այսօր՝ արշավախմբի պետ: Եվ պատահական չէ, որ նրա թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները («Դվինի նյութական մշակույթը 5-8-րդ դդ.» - 1966 թ., «Միջնադարյան Դվին քաղաքը» -1990 թ.), մի շարք մենագրություններ՝ «Դվին 1-ին, Կենտրոնական քաղամասի պեղումները 1964-1970 թթ. հաշվետվություն-ուսումնասիրություն» (1976թ.), «Դվինի վաղմիջնադարյան կնքադրոշմները» (ռուսերեն) մենագրությունը (1982թ.), Փարիզում ֆրանսերեն լեզվով «Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունը» մատենաշարով լույս տեսած Դվինի պատմությանն ու հնագիտությանը նվիրված Dvin Historie et archaeologie de la ville medievele ստվարածավալ մենագրությունը (1996թ.), նվիրված են այդ վարչաքաղաքական ու մշակութային կենտրոնի համակողմանի հետազոտությանը:

Չափազանց լայն է Ա. Քալանթարյանի՝ հնագիտական արշավախմբերի մասնակցության ու ղեկավարման աշխարհագրությունը՝ Դվին, Գառնի, Արմավիր, Արտաշատ, Միսիան, Մարտունի, Վարդենիս, Թումանյան, Սպիտակ, Օշական, Կոթի, Գոգարան և այլուր:

Նշանավոր գիտնականի գրիչը բեղուն էր՝ մոտ 15 մենագրություններ, 150-ից ավելի գիտական հոդվածներ, խմբագրել է բազմաթիվ գրքեր: Նրա քրտնաջան աշխատանքի արդյունք են նաև մի շարք մեծանուն հայագետների (Քաջբերունի, Աշխ. Քալանթար, Կ. Դանիելյան, Ա. Տեր-Ավետիսյան) աշխատությունների ժողովածուների կազմումն ու հրատարակումը:

Ա. Քալանթարյանի մոտ հիսնամյա աշխատանքային գործունեությունը կապված է եղել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Այստեղ է նա անցել կրտսեր գիտաշխատողից մինչև Հայաստանի առաջատար հնագետ-պատմաբանի արգասավոր ուղի: Նա աչքի է ընկել նաև գիտակազմակերպչական մեծ ունակություններով: 1986 թ. Արամ Քալանթարյանը ղեկավարել է ինստիտուտի նորակառույցների հնագիտության բաժինը, որը մեծ աշխատանքներ է տարել Հայաստանի տարբեր շրջաններում՝ հուշարձաններն ավերումից փրկելու և բազմակողմանի գիտական ուսումնասիրություն կատարելու ուղղությամբ: Նրա գործուն մասնակցությամբ հանրապետության նորակառույցներում պայմանագրային եղանակով կազմակերպվել և աշխատել է 40 արշավախումբ:

1993-2006 թթ. Ա.Քալանթարյանը վարել է ինստիտուտի տնօրենի պաշտոնը և նրա կազմակերպչական հմուտ ղեկավարման շնորհիվ, հատկապես երկրի համար դժվարին տարիներին, ինստիտուտը կարողացավ պահպանել գիտական ու կադրային հիմնական ներուժը, նույնիսկ արձանագրեց որոշակի հաջողություններ: Առանձնակի ձեռքբերումներ ինստիտուտն արձանագրեց նրա տնօրինության վերջին տարիներին: Ա. Քալանթարյանը եղել է ինստիտուտի գիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների նախագահ: Անդամ էր նաև մի քանի այլ ինստիտուտների և բուհերի գիտական խորհուրդների, ղեկավարում էր հայագիտության գծով թեմաների փորձագիտական հանձնաժողովի աշխատանքները:

2008 թվականից Արամ Քալանթարյանը ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի փոխնախագահն էր:

Արամ Քալանթարյանը իր համեստ, շիտակ բնավորության, գիտական անուրանալի վաստակի շնորհիվ ընկերական և գիտական ամենալայն շրջանակներում վայելում էր մեծ հարգանք ու հեղինակություն:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Երվանդ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ-ից ստացվեց տխուր լուր: Կյանքից հեռացել է ճանաչված թուրքագետ, Հայաստանում թուրքագիտական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Դազարի Սարգսյանը:

Պրոֆեսոր Սարգսյանի կենսագրությունը բնորոշ է իր սերնդի շատ գիտնականների համար: Ծնվել է Սիսիանի շրջանի պատմական Բռնակոթ գյուղում, միջնակարգ կրթությունն ստացել է Բաքվում, իսկ բարձրագույնը՝ Լենինգրադի համալսարանում: 1942 թ. հաջողությամբ ավարտելով ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան, վերադառնում է Հայաստան և աշխատանքի անցնում Գիտությունների ակադեմիայի համակարգում: Ե. Սարգսյանը երկար տարիներ ղեկավարել է արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժինը, որը նրա ջանքերի շնորհիվ դարձավ Թուրքիայի նոր ու նորագույն պատմության ուսումնասիրման և մասնագետների պատրաստման կարևոր կենտրոն:

1946 և 1963 թթ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաները, որոնք կարևոր ներդրում էին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի նոր շրջանի պատմության ուսումնասիրման բնագավառում: Դոկտորական դիսերտացիայի պաշտպանությունը Մոսկվայում վերածվել է սուր և սկզբունքային բանավեճի խիստ քաղաքականացված խորհրդային թուրքագիտության մոսկովյան դպրոցի ներկայացուցիչների հետ և ստացել է լայն արձագանք գիտական և հասարակական շրջանակներում: Այդպես էր ձեռք բերվում հայկական թուրքագիտության հեղինակությունը:

Պրոֆեսոր Սարգսյանի գրչին են պատկանում 12 մենագրություններ և 100-ից ավելի այլ գիտական աշխատություններ, որոնք իրավամբ գիտական հեղինակություն են բերել հեղինակին և հայրենական թուրքագիտությանը:

Երվանդ Սարգսյանը 50-80-ական թվականների գիտական կյանքի գործուն մասնակիցներից էր: Հետաքրքիր զեկուցումներով հաճախակի հանդես է եկել գիտաժողովներում, այդ թվում նաև միջազգային, ակտիվորեն մասնակցել է գիտական բանավեճերի ու քննարկումների, եղել է մի շարք կոլեկտիվ մենագրությունների ու հոդվածների, ժողովածուների հեղինակակից և պատասխանատու խմբագիր, ղեկավարել և ընդդիմախոսել է բազմաթիվ դիսերտացիաներ՝ իր հարուստ գիտելիքները կիսելով տասնյակ աշակերտների և կրտսեր գործընկերների հետ:

Վերջին տարիներին Հայաստանի մտավորականության համար ստեղծված ծանր կենցաղային պայմանները Ե. Սարգսյանին ստիպեցին տեղափոխվել ԱՄՆ: Սակայն և օտարության մեջ նա շարունակում էր անխոնջ ծառայել գիտությանը, մեզ էին հասնում նրա հոդվածները Թուրքիայի հակահայկական քաղաքականության տարբեր արտահայտումների մասին, որոնք պարբերաբար լույս էին տեսնում սփյուռքահայ մամուլի էջերում:

Հայաստանի արևելագետները, Երվանդ Սարգսյանի բազմաթիվ գործընկերները և աշակերտները խորապես ցավակցում են ականավոր թուրքագետի և մտավորականի՝ Երվանդ Սարգսյանի հարազատներին:

ՀՀ ԳԱԱ նախագահության
Հայագիտության և
հասարակական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

ԳԱՐԻԲՋԱՆՅԱՆ-90

«Հեռու քեզանից
Քո սիրով տարված,
Ես մորս գրկում
Քո սերն եմ առնում
Մայրս՝ Հայրենիք...»

1943 թ. սեպտեմբերին, Սմոլենսկի ճակատամարտի թեժ օրերին, մորն ուղղված այս տողերը պատկանում են հայրենիքի պաշտպանության համար կամավոր ռազմաճակատ մեկնած Գևորգ Բագրատի Ղարիբջանյանին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսին, գիտության վաստակավոր գործչին, որի ծննդյան 90 - ամյակը լրանում է այս օրերին:

Գևորգ Ղարիբջանյանը շատերի կյանքում է լուսավոր հետք թողել: Մինչև այսօր էլ լենինականցիները մի առանձնահատուկ ակնածանքով են հիշում այն տարիները, երբ Գ. Ղարիբջանյանը աշխատում էր Լենինականի քաղկոմի քարտուղար: Նրա անվան հետ են կապված արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը, պետական թատրոնի շենքի կառուցումը: Այստեղ Գ. Ղարիբջանյանի ջանքերով Հայաստանում առաջին անգամ հնչեց Անդրանիկ Օզանյանի անունը՝ փողոցի անվանակոչությամբ:

Նա հիանալի մանկավարժ էր, դասախոս: Դասախոսելով հանրապետության տարբեր բուհերում՝ նա դարձել էր ուսանողական լսարանի սիրելին, իր երիտասարդ ունկնդիրների բարի խորհրդատուն:

Ուսանելով ժամանակի անվանի գիտնականներ Գրիգոր Ղափանցյանի, Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Աշխարբեկ Քալանթարի, Մորուս Հասրաթյանի, Մկրտիչ Ներսիսյանի և մյուսների մոտ, Գ. Ղարիբջանյանը ձեռք բերեց հարցախույզի և հետազոտողի համբավ: 1955 թվականից, երբ նա ընտրվեց Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, հետո՝ իսկական անդամ, ամբողջությամբ դրսևորվեց գիտնական պատմաբանի տաղանդը:

Գ. Ղարիբջանյանը նշանակալի ավանդ ունի նաև գիտական կադրերի պատրաստման գործում: Բեղուն էր նրա գիտակազմակերպչական աշխատանքը 1977-1982 թթ., երբ նա ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ էր և հասարակագիտական բաժանմունքի գիտնական քարտուղարը: Նկատելի է ակադեմիկոսի ներդրումը տարբեր երկրների հետ գիտական կապերի հաստատման ու ամրապնդման գործում: Նա հայ պատմագիտությունը պատվով ու մեծ պատասխանատվությամբ է ներկայացրել տասնյակ երկրներում գումարված գիտաժողովներում:

Լայն են Գ. Ղարիբջանյանի գիտական հետազոտությունների շրջանակները: Դրանց վկայությունն են ավելի քան 75 մենագրությունները, շուրջ 300 հոդվածները, դասախոսական դասընթացները: Վաստակաշատ գիտնականի հետազոտությունները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժումներին, հայագիտության տարբեր պրոբլեմների լուսաբանմանը: Նրա աշխատությունների մեջ նկատելի տեղ է գրավում պատմական դիմանկարների ժանրը: Գ. Ղարիբջանյանի գրչին են պատկանում հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի մի շարք գործիչների, այդ թվում՝ Ստեփան Շահումյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Հովհաննես Բաղրամյանի, Ավետիք Իսահակյանի վառ բնութագրումները:

Անվանի գիտնականը հսկայական հետաքրքրություն է դրսևորել մեր ազգային-ազատագրական շարժումների մեջ մի առանձնակի հմայք ունեցող թեմայի, որը միշտ հրապուրել է նրան: Դա ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի նշանակության և դերի թեման է: Նա է, որ առաջինը Հայաստանում հրատարակեց Անդրանիկին նվիրված աշխատությունը, որը նաև տպագրվեց ռուսերեն:

Գ. Ղարիբջանյանն օժտված էր ժամանակի ձայնը, իր երկրի ձայնը լսելու արտասովոր ունակությամբ: Նա իր բազմաթիվ հոդվածներում խորհում էր այն ամենի մասին, ինչը հուզում էր ոչ միայն իր ժամանակակցին, այլև դրանցում պարունակվող հարցադրումներով ուղղված էր նաև գալիք սերունդներին: Ահա թե ինչ է գրել Վիկտոր Համբարձումյանը ծննդյան 75-ամյակի կապակցությամբ Գ. Ղարիբջանյանին ուղղված խոսքում. «Այժմ, երբ լրանում է Ձեր 75 տարին, ավելի պարզ է երևում, թե որքան համապատասխանում է Ձեր գործունեությունը մեր ժողովրդի և հայկական գիտության շահերին: Ձեր մեծ եռանդը թույլ է տալիս Ձեզ ուղղել հասարակության ուշադրությունը դեպի գիտական, հասարակական, քաղաքական այն հարցերը, որոնք այսօր կարևոր են մեր ժողովրդի համար»:

Մեր հասարակությունն անգուսպ արագությամբ խայտաբղետ է դառնում: Սոցիալական շերտավորումն ավելի է խորանում: Եվ ստեղծված պայմաններում, մեր համոզմամբ, բոլորովին էլ պարապ հարց չէ, թե պատմաբանը, գրողը, արվեստագետը ամեն մի մտավորական արդյո՞ք գտնում է իր ճիշտ տեղը:

Վերջին տասնամյակներում հայ պատմագրության համար հետաքրքիր ժամանակաշրջան է սկսվել: Հայացքները, տեսակետները փոխելը, ժխտելը, դրանցից հրաժարվելը ոմանց համար մոդա են դարձել: Եվ այդ ամենն արվում է «վերաիմաստավորելու» անվան տակ: Ոմանք, ինչպես օրինակ, դպրոցի համար երաշխավորված պատմության դասագրքի ու ծրագրի հեղինակները այնպիսի շտապողականությամբ են «վերաիմաստավորել» պատմությունը, որ գործածությունից դուրս են նետել Հայրենական մեծ պատերազմը, այն փոխարինելով Երկրորդ համաշխարհային պատերազմով:

ՀԱՅԱՑՔ ՆԵՐԿԱՅԻ ՄԻՋՈՎ...

Իհարկե, գիտությունը, նաև պատմագիտությունը քարացած չեն: Շարժումը, հայացքը ներկայի միջով դեպի անցյալը և ուղղված դեպի ապագան՝ պատմագիտության մշտական ուղեկիցն են: Նրա միջուկն այն կենսանյութն է, որը չի ընդունում կեղծիքը: Բայց և պատմագիտության շարժիչ ուժերից մեկն էլ վերաիմաստավորումն է: Հասարակության զարգացումը հասնում է մի այնպիսի վիճակի, երբ, այո, այդ վերաիմաստավորումը դառնում է անհրաժեշտություն: Եվ նաև պատմագիտությունն է, որ պետք է զգուշացնի, որ վերաիմաստավորելիս դեն չնետենք այն արժեքը, որն ունի կողմնացույցի դեր:

Մեզ համար այդպիսի արժեք է նաև ռուսական կողմնորոշումը, որը վաղուց դարձել է հայ ժողովրդի ազգային սեփականությունը: Իսրայել Օրին ու Եսայի կաթողիկոսը, Հովսեփ էմինն ու Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, Լազարյաններն ու Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, Խաչատուր Աբովյանն ու Միքայել Նալբանդյանը, Կոմիտասն ու Խրիմյան Հայրիկը, Ստեփան Շահումյանն ու Անդրանիկ Օզանյանը, Ալեքսանդր Մյասնիկյանն ու Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանն ու Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Բաղրամյանն ու Արամ Խաչատուրյանը կանգնած են եղել հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ակունքների մոտ և ապագա սերունդներին են պատգամել հայ-ռուսական բարեկամության պահպանման անանց անհրաժեշտությունը:

Կարծես թե պատասխանելով «երրորդ ուժի բացառման մասին» դավադիր կարգախոսի հեղինակներին, ակադեմիկոս Ղարիբջանյանը եղավ առաջիններից մեկը, որը բարձրաձայն զգուշացրեց, թե ինչ ծանր հետևանքներ կունենա այդպիսի «վերաիմաստավորումը» հայ ժողովրդի համար: Մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող համազգային խնդրի՝ ռուսական կողմնորոշման պաշտպանության օգտին ակադեմիկոսի հրապարակային ելույթներն իր ժողովրդի ապագայով անհանգստացող մտավորականի սկզբունքային կեցվածքի վկայությունն էին:

Գևորգ Ղարիբջանյանին մշտապես հետաքրքրում էր՝ հայ-ռուսական բարեկամության թեման, որին նա նվիրել է բազմաթիվ գրքեր ու հոդվածներ և հրապարակային ելույթներ:

Այսօր ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանը մեզ հետ չէ, սակայն Մեծ հայրենականի մասնակցի, գիտնականի, մանկավարժի, ազնիվ հայրենասերի և առաքինի մարդու բարի հիշատակը ապրում է նրան ճանաչողների սրտերում:

Վլադիմիր ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ-80

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լիա Օսիպյանի ծննդյան 80 տարին: Շնորհավորելով նշանավոր գիտնականին հոբելյանի առթիվ, ՀՀ ԳԱԱ նախագահությունը նրան է հղել ողջույնի ուղերձ, որտեղ ասված է.

Մեծարգո Լիա Լևոնի,

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ նախագահությունը և Բնական գիտությունների բաժանմունքը ջերմորեն շնորհավորում են Ձեզ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Ձեր աշխատանքային ողջ գործունեությունը կապված է Երևանի պետական համալսարանի հետ, որտեղ Դուք անցել եք երկարամյա ճանապարհ՝ լաբորանտից մինչև բուսաբանության ամբիոնի վարիչ և կենսաբանության ֆակուլտետի դեկան: Ձեր հարուստ ստեղծագործական ժառանգությունը սնկաբանության բնագավառում հիմք է հանդիսացել Հայաստանի սնկաբանական դպրոցի ստեղծման և զարգացման համար:

Ձեր գործունեության վաստակն է Հայաստանի բազմաթիվ սնկաբան-գիտնականների պատրաստումը: Կենսաբանության ֆակուլտետի ներկայիս աշխատողները Ձեր նախկին ուսանողներն են, որոնք հաջողությամբ շարունակում են իրենց ուսուցչի շնորհակալ գործը: Ձեր ղեկավարությամբ պաշտպանվել են մոտ քսան դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ: Մեծ է Ձեր ավանդը նաև ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման բնագավառում:

Ձեր գործունեությունն ի մի է բերվել մոտ 400 տպագրված գիտական աշխատանքներում, այդ թվում 5 մենագրություններում, Դուք եղել եք բազմաթիվ գիտական համաժողովների նախաձեռնող և կազմակերպիչ, ընդգրկվել մի շարք միջազգային գիտաժողովների կազմկոմիտեներում, ներկայացրել եք գիտական զեկույցներ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Հունգարիայի, Իսրայելի, Չինաստանի, Ուկրաինայի և այլ երկրների բազմաթիվ գիտաժողովներում:

Ձեր նկարագիրը թերի կլինի առանց հասարակական գործունեության, Դուք բազմաթիվ մասնագիտական և հասարակական կազմակերպությունների անփոխարինելի անդամ եք, Սպառողների Ազգային ակադեմիայի փոխնախագահ, Ռուսաստանի և Հայաստանի բուսաբանական ընկերության անդամ:

Դուք Հայաստանում առաջինն էիք, որ սկիզբ դրեցիք մարդու և բնության համար գենետիկորեն մոդիֆիկացրած օրգանիզմների և մթերքների հնարավոր վտանգների մասին քննարկումներին:

Ներկայումս Դուք հասարակական գործունեություն եք իրականացնում սպառողների իրավունքների և սննդամթերքների անվտանգության պաշտպանության, ինչպես նաև Հայաստանի անտառների և կանաչ տնկարկների պահպանման և վերականգնման վերաբերյալ: Ձեր կյանքի ողջ ընթացքում ուշադրության կենտրոնում են եղել բնության վերաբերյալ բոլոր հարցերը:

Սիրելի Լիա Լևոնի, կրկին սրտանց շնորհավորում ենք Ձեզ հոբելյանի առթիվ, մաղթում քաջառողջություն, երկար տարիների կյանք, նորանոր հաջողություններ և երջանկություն անձնական կյանքում:

Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
Վ. ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԲԳԲ ակադեմիկոս-քարտուղար

Ակադեմիայի հյուրն էր Նոբելյան մրցանակի դափնեկիր Աարոն Չեյխանովերը

Նոբելյան մրցանակի դափնեկիր Աարոն Չեյխանովերը ՀՀ ԳԱԱ-ում հանդիպեց Հայաստանի գիտական հասարակայնության հետ և ներկայացրեց բժշկագիտության զարգացման միտումները: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը Աարոն Չեյխանովերին առաջարկեց համագործակցել ՀՀ ԳԱԱ-ի հետ: «Ուրախ կլինենք համագործակցության եզրեր գտնել Ձեզ հետ և պատրաստ ենք հրավիրելու Ձեզ՝ ծանոթանալու մեր գիտությանը»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Հանդիպման ընթացքում ելույթ ունեցան նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանը և Արմեն Գալոյանը:

Աարոն Չեյխանովերը առաջին անգամ է Հայաստանում: Նա ժամանել է Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի հրավերով: Համալսարանում նա հանդես է եկել «Դեղագործությունը XXI դարում. պատրաստ ենք արդյոք բուժել բոլոր հիվանդությունները» զեկույցով:

Աարոն Չեյխանովերը Իսրայելի Գիտությունների և մարդասիրության ակադեմիայի, Եպիսկոպոսական գիտությունների ակադեմիայի անդամ է, ԱՄՆ Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

2004 թ. Աարոն Չեյխանովերը Ավրամ Հերշկոյի և Իրվին Ռոուզի հետ արժանացել է Նոբելյան մրցանակի՝ ապոպտոզների ռիբիկվիտին միջնորդավորված անկման հայտնագործության համար:

ՀՀ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հրաչյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ես ընկել եմ պագշոտ Շամիրամի նետից,
Հին Հռոմն է զարկել ինձ մահացու խոցով,
Իմ արյունն են ոթել, խառնել Տղմուտ գետին,
Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:

Խաչ են դաջել կրծքիս բյուզանդական տեգով,
Արաբ նժույգների սմբակի տակ գցել,
Ինձ խարույկ են հանել մոնղոլների ձեռքով,
Միրտս օսմանական ավիններին ցցել:

Ինձ հայրենի մեր տան, թիսկենուց են կախել,
Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ,
Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել...
Բայց ես դեռ կա՛մ:

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ուժով»:

Սալոնիկ, 1911 թ. հոկտեմբեր

Ստեփանոս Ստեփանոսոպոլիս

Հունաստանի «Քաղաքական գարունի» ներկայացուցիչ

«Դժբախտ հրեա ժողովուրդը գոնե տեսավ կանցլեր Վիլլի Բրանդտին՝ ծնրադրած համակենտրոնացման մի ճամբարում, կարծեմ Աուշվիցում, հրապարակավ ներողություն խնդրելիս համաշխարհային հասարակությունից, մարդկությունից:

Կա՞ որևէ մեկը, ոչ միայն այստեղ, ամբողջ աշխարհում, որ հավատա, թե Դեմիրելը կամ որևէ մեկ ուրիշ թուրք նախագահ կամ վարչապետ այդ նույն պատճառով երբևէ պիտի ծնրադրի Եփրատի ափին, Էրզրումի կիրճերում, Խարբերդի ձորերում և ներողություն պիտի խնդրի մարդկությունից՝ մեկուկես միլիոն հայերի ջարդերի համար»:

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ

Ֆրանսիացի գրող

Մենք հասկացանք, որ երկրամյա անհավասար պայքարը թուրք կեղեքիչի և հայի միջև դեսպոտիզմի, բարբարոսության պայքարն է, ընդդեմ արդարացիության և ազատության ոգու: Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ հասած մարող աչքերով, որոնցում առկայծում էր հույսի շողը, ի վերջո, հասկացանք, որ մեր այդ քույրը մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, և նրա մեղքն այն է, որ բաժանում է մեր զգացմունքները, սիրում է այն, ինչ մենք ենք սիրում, հավատում է նրան, ինչին մենք ենք հավատում, և մեզ նման գնահատում է իմաստությունը, արդարությունը, պոեզիան և արվեստը:

Այս է նրա անքավելի հանցանքը:

Pic. 9. This picture is from a Gospel published in London in 1634, in which Armenia is presented as the birthplace of all mankind

1634 թվականին Լոնդոնում տպագրված Ավետարանի տոհմածառի այս պատկերում փաստվում է, որ Հայաստանը եղել է մարդկության բնօրրանը:

Դանիել ՎԱՐՈՒԺԱՆ

Նավասարդյան

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ,
Ա՛լ վերածնե՜ փլատակներեն և փառագոչ
Քնարըդ ա՜ռ:
Հանո՛ւն Ուժին, հանո՜ւն Գեղին մտիր մեհյանն
Աստվածներուն.
Գահը ձեռքիդ՝ բագնե բագին համասփռե՛
Հուր ու արյուն:
Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սրտին վրա
Լեցո՜ւր, լեցո՜ւր,
Չի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մենք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՜ր Արշալույս:

Թուրք նշանավոր ռասիստ, երիտթուրքերի կուսակցության պարագլուխներից մեկը՝ Աղա Գընդըզը գիշատիչ մոլուցքով գրել է.

«Պատերազմ գնալուց առաջ թող որ ես ձեզ ասեմ, թե ինչ եմ անելու. իմ վերցրած ամեն բուռ հողից արյուն պիտի ժայթքի, և իմ ճիրանների մեջ գարուններն աշունների և աշունները ձմեռների պիտի փոխվեն, եթե ես քարը քարի վրա թողնեմ՝ ապա թող իմ օջախը ավերակ դառնա, իմ սվինը վարդերով լեցուն պարտեզները գերեզմանի պիտի վերածի, և ես կկտակեմ պատմությանը այնպիսի ավերակներ, ուր տասը դար շարունակ քաղաքակրթություն չպիտի ծաղկի, գթությունը իմ սրի ծայրից կկախեմ, իրավունքը՝ հրացանիս բլթակից, և քաղաքակրթությունը՝ ձիուս ոտքերից: Եվ լեռնախորշերը, ավերակների այլանդակ պատկերները հավիտյան կասեն՝ «Թուրքն է անցել այստեղից»:

Ժ. Պ. ԱԼԵՄ

«Երբ նայում ենք ջարդերի ու ավերումների երկար շարանը, որոնք վերացրել են քարտեզից անթիվ քաղաքներ, ամայացրել ընդարձակ երկրամասեր, առաջ են բերել ժողովուրդների գաղթեր, հիանում ենք հայ ժողովրդով, որը ոչ միայն դիմացավ ոչնչացման, այլև մերժեց ուծացումն ու դավանափոխումը (իսլամականի), որոնք կարող էին վերջ դնել նրա դժբախտություններին:

Այդ հիացմունքին խառնվում է երախտագիտությունը, որովհետև եթե հայ ազգը անհայտանար կամ միածուլվեր հարևան ազգերին, ապա քաղաքակրթության շենքից կպակասեր մի քար, գուցե և գմբեթ»:

ՄԱՅԻՍԸ ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍՆ Է



ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ՀԱՂԹԵՑԻՆՔ

Այսպիսի նշանաբանով ընթացավ 2010 թ. ապրիլի 8-9-ը Մոսկվայում կայացած «1945 թ. ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը և նրա նշանակությունը ԱՊՀ և աշխարհի ժողովուրդների համար» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջազգային ֆոնդը, Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարությունը, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիան: Պլենար նիստերը, որոնք տեղի ունեցան Ռուսաստանի պետական գրադարանի «Պուշկովի տանը», ղեկավարում էին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Միջազգային հարաբերությունների պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ա. Վ. Տորկունովը և Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտի միջազգային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ, ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջազգային ֆոնդի վարչության համանախագահ Մ. Ե. Շվիդկոյը: ՌԴ պրեզիդենտի վարչակազմի ղեկավար Ս. Ե. Նարիշկինը կարդաց Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի ողջույնի ուղերձը՝ ուղղված գիտաժողովի մասնակիցներին: Այնուհետև զեկուցումներով հանդես եկան Ուկրաինայի ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Բ. Ե. Պատոնը, Բելառուսի ազգային ակադեմիայի նախագահության նախագահ, ակադեմիկոս Մ. Վ. Մյասնիկովիչը, Ղազախստանի ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Մ. Ժ. Ժուրինովը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանը, Տաջիկստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Մ. Ի. Իկրոմովը, Լիտվայի պատմության ինստիտուտի տնօրեն Արվիդաս Նիկժենտայտիսը, Բաքվի սլավոնական համալսարանի ռեկտոր Ք. Մ. Արդուլլաևը, Ուզբեկստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Դ. Ա. Ալիմովան, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Օ. Չուբարյանը: Պլենար նիստերում ելույթներ ունեցան ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, որը կարդաց ՀՀ նախագահ Ս. Ա. Սարգսյանի ուղերձը՝ ուղղված գիտաժողովի մասնակիցներին, Ուկրաինայի կրթության և գիտության նախարար Դ. Վ. Տաբաչնիկը, Ռուսաստանի Դաշնությունում Աղրբեջանի Արտակարգ և լիազոր դեսպան Փոլադ Բյուլբյուլ-օղլին, Ռուսաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Վ. Յու. Շմիդը, ԱՄՆ-ի Կանզասի ռազմական պատմության համալսարանի տնօրեն Մարկ Պարիլլոն, ԱՄՆ-ի հրեաների ողջակիզման թանգարանի տնօրեն Պոլ Շապիրոն, Լեհաստանի նախկին արտաքին գործերի նախարար, այժմ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի գլխավոր քարտուղարի զինաթափման գծով խորհրդի նախագահ Ադամ Ռոտֆելդը, «Չերչիլ լիդերշիպ» ֆոնդի պրեզիդենտ, պատմաբան, գրող, Ուինսթոն Չերչիլի թոռնուհի Մելիսա Սանդիսը (Մեծ Բրիտանիա), Չինաստանի նոր և նորագույն պատմության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Լուան Ցզին Խեն, Մոլդովայի Հանրապետության Եվրոպական ինտեգրացման ու քաղաքագիտության ինստիտուտի տնօրեն Վ. Ի. Ցվիրկունը և ուրիշներ:



ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Ս. Մարտիրոսյանի զեկուցումը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում հայ ժողովրդի ներդրած ավանդին: Նա մասնավորապես շեշտեց, որ հայ ժողովրդի համար այդ պատերազմում տարած հաղթանակը ուներ պատմական նշանակություն, քանի որ Մոսկվայի, Ստալինգրադի ճակատամարտերում գերմանական զորքերի կրած պարտությունից հետո, թուրքական ֆաշիստամետ կառավարությունը ստիպված եղավ Խորհրդային Հայաստանի սահմաններից ետ քաշել իր 26 սպառազեն դիվիզիաները և հրաժարվել հայկական մի նոր եղեռն իրագործելու մտքից:

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը՝ «Սփյուռքահայերի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում» զեկուցման մեջ ընդգծեց այն միտքը, որը պատերազմի տարիներին սփյուռքահայերի ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ: Նրանք ոչ միայն բարոյապես պաշտպանեցին մայր հայրենիքը, այլև դրամական միջոցներ հանգանակելով կարմիր բանակի համար կառուցեցին «Սասունցի Դավիթ», «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները. միայն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի բանակների շարքերում մարտնչեցին 50.000 հայեր:

Նկարում. Մոսկովյան միջազգային գիտաժողովի հայկական պատվիրակության անդամները

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյանի զեկուցումը նվիրված էր 1941-45 թթ. պատերազմը որպես Հայրենական մեծ պատերազմ համարելու հայ պատմաբանների տեսակետին, որ այդ գնահատականը երբեք կասկածանքի տեղիք չի տվել:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ա. Հարությունյանի՝ «Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945 թթ.)» զեկուցման մեջ մանրամասն լուսաբանվել էր բանվոր դասակարգի, գյուղատնտեսության և մտավորականության գործունեությունը պատերազմական պայմաններին համապատասխան: Նրանց հիմնական նշանաբանն էր՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար»:

Հայամետ հետաքրքիր մտքեր կային Ադամ Ռոտֆելդի (Լեհաստան) և Մելիսա Սանդիսի (Մեծ Բրիտանիա) ելույթներում: Լեհաստանի նախկին արտաքին գործերի նախարարը առաջ քաշեց Օսմանյան կայսրությունում իրականացված հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման հարցը, իսկ ականավոր պետական, ռազմական գործիչ, գրող, պատմաբան Մելիսա Սանդերսը երախտագիտության խոսք ասաց Խորհրդային Միության հերոս, լեգենդար անլեգալ հետախույզ Գևորգ Վարդանյանի հասցեին, որը 1943 թ. նոյեմբերի 28-դեկտեմբերի 1-ը Թեհրանում տեղի ունեցած երեք դաշնակից տերությունների ղեկավարների խորհրդակցության ժամանակ կանխեց ֆաշիստական Գերմանիայի գաղտնի հետախուզության անհաբեկչական ակտը, որի հետևանքով կզոհվեին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը, Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Ուինսթոն Չերչիլը և ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինը:

Գիտաժողովի մասնակիցները պլենար նիստերից հետո իրենց աշխատանքները շարունակեցին Մոսկվայի «Պոկլոննայա գորա» վայրում գտնվող Հայրենական մեծ պատերազմի կենտրոնական թանգարանում, իսկ հաջորդ օրը այցելեցին ՌԴ պետական արխիվ, որտեղ ներկա եղան «Խորհրդային հասարակությունը և պատերազմը 1941-1945 թթ.» ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը:

Գիտաժողովի շրջանակներում ՌԴ ԳԱ Համընդհանուր պատմության ինստիտուտում տեղի ունեցավ ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների միջազգային կազմակերպության նիստ, որի աշխատանքներին մասնակցեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյանը:

Բելառուսի, Ուկրաինայի և Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտների ռազմական պատմության բաժինների ղեկավարները որոշեցին համատեղ ուժերով աշխատություններ հրատարակել Բելառուսի և Ուկրաինայի ազատագրմանը մասնակից հայ ռազմիկների սխրանքների մասին:

Գիտաժողովում կարդացված զեկուցումներն ու ելույթները տպագրվելու են առանձին ժողովածուում և «Պատմական տարածք» (ԱՊՀ երկրների պատմության հիմնահարցեր)» հանդեսում:

Գերմանիայի Հալլե քաղաքում օծվեց Ս. Հարություն հայկական եկեղեցին

Գերմանիայի հայոց առաջնորդարանը և Սաքսոնիա-Անհալթի հայ համայնքը տեղեկացնում են, որ ապրիլի 17-18-ին կատարվել է Գերմանիայի Հալլե քաղաքի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու օրհնության և օծման արարողությունը, որը հանդիսապետել է Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը՝ մասնակցությամբ ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի դեկան Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի: Հանդիսությանը ներկա է եղել նաև Հալլեի գլխավոր քաղաքապետ տիկին Դագմար Սցաբոդոսը:

Հայտարարություն

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ Պոպուլյացիաների գենետիկայի և էկոլոգիայի խմբի ղեկավարի թափուր տեղի համար: Անհրաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան, Հասրաթյան 7, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, հեռ. 28-16-26:

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Սպորագրված է տպագրության՝ 28.04.2010 թ.:

"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА